**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱ-
ՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 25-ի N 3/3.8-2/6627-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 20-ի N ԱԱ/3-6/8165-12 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշման մեջ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա, 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա և 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-093-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «2072.2 մլն դրամ» բառերը փոխարինել «6599.2 մլն դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ձեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2012 թվականի մայիսի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական և էլեկտրամոնտաժային աշխատանքների իրականացում՝ 725638400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր


1.	Ծրագրի անվանումը	«Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում»
2.	Ծրագրի անմիջական նպատակները	ՀՀ ֆուտբոլային ենթակառուցվածքների զարգացում
3.	Բարեգործը (բարեգործները)	Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն-ՈՒԵՖԱ, (Շվեյցարիա, Ժնև), Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա-ՖԻՖԱ, (Շվեյցարիա, Յյուրիխ)
4.	Ծրագրի բարեգործական որակման նպատակներն ըստ ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N° 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի	Նախատեսում ենք ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
5.	Ծրագիրն իրականացնողները	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915)
6.	Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է Երևան քաղաքում՝ սպորտի բնագավառում:
7.	Ծրագրի շահառուները կամ նրանց ընտրության սկզբունքները, չափանիշները	«Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոց»
8.	Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2007 թվականի մարտի 1-ից մինչև 2013 թվականի հունիսի 30-ը:
9.	Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<ol style="list-style-type: none"> 1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ 4944.2 մլն դրամ 2. Բժշկական սարքավորումների ներմուծում՝ 25 մլն դրամ 3. Լուսավորություն՝ 410 մլն դրամ 4. Մարզադահլիճի մանրահատակ՝ 70 մլն դրամ 5. Կահավորում՝ 150 մլն դրամ 6. Շինանյութի և նեքին հարդարման պարագաների ներմուծում՝ մեկ մլրդ դրամ Գումարները նշված են առանց ԱԱՀ-ի:
10.	Ձեռք բերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Մարզադպրոցի շենքի կառուցման նախագծի կազմում («Երևաննախագիծ ՓԲԸ-ի կողմից»)՝ 17,2 մլն դրամ, մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացում՝ 1823 մլն դրամ, տեխնիկական հսկողությունը՝ 1,56 մլն դրամ, հեղինակային հսկողություն՝ 7,44 մլն դրամ, լողավազանի և վերականգնողական կենտրոնի կառուցում՝ 600 մլն դրամ, խաղադաշտերի համար տրիբունաների կառուցում՝ ստորին մասում տեղադրված հանդերձարաններով՝ 1840 մլն դրամ, մարզադաշտի կառուցում՝ 110 մլն դրամ: Նախատեսվում է կառուցել նաև 1 հատ արհեստական խոտածածկով խաղադաշտ՝ 175 մլն. դրամ (որի համար ՖԻՖԱՆ



9/10.14

		տրամադրել է 400 հազար ԱՄՆ դոլար) և 10 հատ ստանդարտ չափերի խաղադաշտ՝ 370 մլն դրամ: Բժշկական սարքավորումների ներմուծում՝ 25 մլն դրամ, լուսավորության սարքավորումների ներմուծում՝ 410 մլն դրամ, մարզադահլիճի մանրահատակի ներմուծում՝ 70 մլն դրամ, շինանյութի և նեքին հարդարման պարագաների ներմուծում՝ մեկ մլրդ դրամ: Կահավորում 150 մլն դրամ: Գումարները նշված են առանց ԱԱՀ-ի:
11.	Գործարքները, որոնցով ակնկալվում է հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարումից ազատում	Ակնկալվում է մարզադպրոցի կառուցման շինարարական և կահավորման աշխատանքների իրականացման, անհրաժեշտ նյութերի ներմուծման և ձեռքբերման գործարքների դիմաց հարկային արտոնություն:
12.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն 6599.2 մլն դրամ է, որից՝ 6278.3 մլն դրամ ՈՒԵՖԱ-ն: 320.9 մլն դրամ ՖԻՖԱ-ն:
13.	Անմիջականորեն շահառուների սպառմանը չուղղվող ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
14.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ (եթե համագործակցություն նախատեսվում է), համագործակցության բովանդակությունը, իրականացման կարգը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ:
15.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը (եթե վերահսկողություն նախատեսվում է)	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից:

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ



Ռ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

9/10.14



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հուլիսի 2012 թվականի N Մ-506-Ա
(Որոշումն ընդունվել է 2012 թվականի հունիսի 29-ին)
քաղ. երևան

«ԱՐՑԱՆԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հուլիսի 2-ի N 3/3.8-2/8762-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 2-ի N ԱԱ/3-6/6890-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Բարեգործական որակել անհատ բարերարների կողմից Դուբայի «Ֆուր դայրեքշն էլեքթրոնիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցով «Արցախի ազատամարտիկների միություն» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված կահույքի, տնտեսական պարագաների և կենցաղային տեխնիկայի (325 տեղ, 17280 կգ ընդհանուր քաշով, 46292.55 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 5019 ԱՄՆ-ի դոլար, Սյունիքի տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

Սահմանել, որ բեռն օգտագործվելու է «Արցախի ազատամարտիկների միություն» հասարակական կազմակերպության վարչական շենքի վերանորոգման և կահավորման համար:

2. «Արցախի ազատամարտիկների միություն» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունիսի 2012 թվականի N Մ-507-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
27-Ի N Մ-299-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի 2012 թվականի հունիսի 27-ի N 854/44 գրությունը, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 2)» N Մ-299-Ա որոշման 1-ին կետում «923 կգ» բառերը փոխարինել «1479 կգ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունիսի 2012 թվականի N Մ-508-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
8-Ի N Մ-397-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի 2012 թվականի հունիսի 27-ի N 853/44 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 5)» N Մ-397-Ա որոշման 1-ին կետում «Արարատյան» ՏՄ» բառերը փոխարինել «Զվարթնոց ՄՏ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունիսի 2012 թվականի N Մ-509-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի N Մ-741-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈ-
ԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Առողջապահական համա-
կարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունիսի 15-ի N ԱԲ/15-1/5973-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 20-ի N 3/3.8-1/8161-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 19-ի N ԱԱ/3-4/6379-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-282-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Առողջապահական համակարգի հզորացում») N Մ-741-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) «N ARM-809-G04-HSS-00/21 պայմանագրում» բառերը հետո լրացնել «և 2012 թվականի մարտի 29-ի N 1 համաձայնագրում» բառերով:

2) «20304920 դրամի չափով» բառերը փոխարինել «21390920 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունիսի 2012 թվականի N Մ-510-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի N Մ-742-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈ-
ԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Առողջապահական համա-
կարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունիսի 15-ի N ՍԲ/15-1/5972-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 20-ի N 3/3.8-1/8163-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 18-ի N ԱԱ/3-4/6332-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-282-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Առողջապահական համակարգի հզորացում») (1) N Մ-742-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) « N ARM-809-G04-HSS-00/22 պայմանագրում» բառերից հետո լրացնել «և 2012 թվականի մարտի 29-ի N 1 համաձայնագրում» բառերով.

2) «9031500 դրամի չափով» բառերը փոխարինել «10837800 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
29 հունիսի 2012 թվականի N Ս-511-Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ,
ԿՈՎԿԱՍԻ ԲԵՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԽՈՍՐՈՎԻ ԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵ-
ԼՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 12.02.2010 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐԻ Հ ՊԱՅՄԱ-
ՆԱԳՐԻ ԵՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2012 ԹՎԱԿԱՆԻ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2012 թվականի մայիսի 25-ի N 1/01.3/10810-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 4-ի N 3/3.8-1/7316-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունիսի 4-ի N 02/3326-12, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 31-ի N ԱԱ/3-4/5406-12, Հայաստանի Հանրապետության Արարտի մարզպետի 2012 թվականի հունիսի 1-ի N 1/13/2/2590-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 47964700 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2012 թվականի» ծրագիրը (կցվում է):


2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-

ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի ու Հայաստանի Հանրապետության Արարտի մարզպետին:



ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Հ Բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2012 թվականի

1. Ծրագրի նպատակը	«Խոսրովի անտառ» պետական արգելոցում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում նպատակաուղղված պետական արգելոցի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Կովկասի Բնության Հիմնադրամ, Թուլպենիոֆստրասե 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա
4. Ծրագիրը կատարողը	«Հ Բնապահպանության նախարարության աշխատակազմ
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արարատի մարզ, ք.Վեդի
6. Ծրագրի բյուջեն	«Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն» Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի համար «Էջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացված հատուկ

Ա. Փիրումյան

5/6

7. Բարեգործություն ստացողը	հաշվում՝ 47964.7 հազ.դրամ): Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 9-ի:																																																
8. Ծրագրի իրականացման տևողությունը	«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ, Արարատի մարզ, ք.Վեդի																																																
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	01.05.2012թ. – 31.12.2012թ. «Հ Բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2012 թվականի ծրագիր՝ 01.05.2012թ. – 31.12.2012թ. – 47964.7 հազ.դրամ, այդ թվում՝ 1. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում – 7036.4 հազ.դրամ, այդ թվում՝																																																
<table border="1"> <thead> <tr> <th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th> <th>Չափի միավորը</th> <th>Ամբողջ քանակը (ծավալը)</th> <th>Շեղանորդ գումարը (հազար դրամով)</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Բենզին «Ռեզոլյար»</td> <td>լիտր</td> <td>9520</td> <td>4090,0</td> </tr> <tr> <td>Դիզելային վառելիք</td> <td>լիտր</td> <td>1365</td> <td>567,0</td> </tr> <tr> <td>Շարժիչի յուղ ամառային</td> <td>կգ</td> <td>55</td> <td>226,0</td> </tr> <tr> <td>Շարժիչի յուղ ձմեռային</td> <td>կգ</td> <td>55</td> <td>226,0</td> </tr> <tr> <td>Արգելական հեղուկ</td> <td>լիտր</td> <td>20</td> <td>24,0</td> </tr> <tr> <td>Հակասառիչ հեղուկ</td> <td>լիտր</td> <td>100</td> <td>59,0</td> </tr> <tr> <td>Ավտոդող ձմեռային</td> <td>հատ</td> <td>12</td> <td>720,0</td> </tr> <tr> <td>Ավտոդող ամառային</td> <td>հատ</td> <td>12</td> <td>816,0</td> </tr> <tr> <td>Ավտոդող «Նիվա շևրվետ»</td> <td>հատ</td> <td>8</td> <td>264,0</td> </tr> <tr> <td>Մարտկոց 60 Ա</td> <td>հատ</td> <td>2</td> <td>60,4</td> </tr> <tr> <td>Մարտկոց 75 Ա</td> <td>հատ</td> <td>2</td> <td>79,0</td> </tr> </tbody> </table>		Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Շեղանորդ գումարը (հազար դրամով)	Բենզին «Ռեզոլյար»	լիտր	9520	4090,0	Դիզելային վառելիք	լիտր	1365	567,0	Շարժիչի յուղ ամառային	կգ	55	226,0	Շարժիչի յուղ ձմեռային	կգ	55	226,0	Արգելական հեղուկ	լիտր	20	24,0	Հակասառիչ հեղուկ	լիտր	100	59,0	Ավտոդող ձմեռային	հատ	12	720,0	Ավտոդող ամառային	հատ	12	816,0	Ավտոդող «Նիվա շևրվետ»	հատ	8	264,0	Մարտկոց 60 Ա	հատ	2	60,4	Մարտկոց 75 Ա	հատ	2	79,0
Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Շեղանորդ գումարը (հազար դրամով)																																														
Բենզին «Ռեզոլյար»	լիտր	9520	4090,0																																														
Դիզելային վառելիք	լիտր	1365	567,0																																														
Շարժիչի յուղ ամառային	կգ	55	226,0																																														
Շարժիչի յուղ ձմեռային	կգ	55	226,0																																														
Արգելական հեղուկ	լիտր	20	24,0																																														
Հակասառիչ հեղուկ	լիտր	100	59,0																																														
Ավտոդող ձմեռային	հատ	12	720,0																																														
Ավտոդող ամառային	հատ	12	816,0																																														
Ավտոդող «Նիվա շևրվետ»	հատ	8	264,0																																														
Մարտկոց 60 Ա	հատ	2	60,4																																														
Մարտկոց 75 Ա	հատ	2	79,0																																														
2. Կենցաղային, հանրային և հատուկ սննդի նյութերի ձեռքբերում – 105.0 հազ.դրամ, այդ թվում՝																																																	

Ա. Փիրումյան

5/6

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Օճառ	հատ	48	4,8
Լվացքի փոշի	կգ	16	15,2
Լուսամխոփ	հատ	3	45,0
Սրճարանի ծածկ	հատ	1	40,0

3. Վարչական սարքավորումների ձեռքբերում -- 1030.0 հազ.դրամ, այդ թվում՝

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Գրասեղան	հատ	1	160,0
Գրասեղան	հատ	1	350,0
Բազկաթոռ	հատ	2	300,0
Հեռուստացույց փոքր Դ-54	հատ	2	220,0

4. Այլ ծախսեր ձեռքբերում - 4200.0 հազ.դրամ, այդ թվում՝

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Խոսքով և Գառնի տեղամասերի երթուղիների մաքրում և բարեկարգում	կմ	10,0	600,0
Գառնի տեղամասի սանհանգույցի պատրաստում և վերանորոգում	դրամ	1	500,0
Գառնի տեղամասի ֆինանսական տնակի վերանորոգում	դրամ	1	1000,0
Խոսքով տեղամասի այցելուների կենտրոնի և ճամբարատեղի	դրամ	1	900,0

Ա. Զ. Գառնի

9/5

շրջակայքում էլ. հոսանքի անցկացում			
Գառնի և Խոսքով տեղամասերի այցելուների կենտրոնի շրջակա տարածքի բարեկարգում /	դրամ	1	700,0
Բուսական և կենդանական աշխարհի, պատմամշակութային, լանդշաֆտային և այլ նյութերի տեղադրման ցուցանակների պատրաստում /	դրամ	1	500,0

5. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում - 6000.0 հազ.դրամ, այդ թվում՝

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Ավտոմեքենա ՌՈՒՁ 31519 ձեռք բերում	հատ	1,0	6000,0

6. Ծառայությունների ձեռքբերման ծախսեր - 2634.3 հազ.դրամ, այդ թվում՝

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Գազամատակարարում	դրամ	1,0	400,0
Էլեկտրոէներգիա	դրամ	1,0	1414,3
Աղբահանություն	դրամ	1,0	120,0
Միջազգային և միջքաղաքային հեռախոսային կապի ծառայություններ	դրամ	1,0	500,0
Ավտոմեքենաների ապահովագրություն	դրամ	1,0	150,0

Ա. Զ. Գառնի

9/5

		Ավտոմեքենայի տեխ. Ձեռնում	գրամ	1.0	50.0
		7. Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում - 1500.0 հազ.դրամ , այդ թվում			
		Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
		Մարդատար ավտոմեքենաների նորոգում և պահեստամասերի ձեռք բերում	հատ / unit	2.0	1000.0
		Բեռնատար ավտոմեքենաների նորոգում և պահեստամասերի ձեռք բերում	հատ / unit	1.0	500.0
		8. «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ԴՈԱԿ-ի անձնակազմի լրացուցիչ վարձատրություն (խրախուսում) - 25459.0 հազ.դրամ :			
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 7036.4 հազ.դրամ 2. Կենցաղային, հանրային և հատուկ սննդի նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 105.0 հազ.դրամ 3. Վարչական սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 1030.0 հազ.դրամ 4. Այլ ծախսեր ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 4200.0 հազ.դրամ 5. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում (գործարքի			

Ա. Զարգարյան

5/6

		շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 6000.0 հազ.դրամ 6. Ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 2634.3 հազ.դրամ 7. Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 1500.0 հազ.դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Բոլոր ծախսերն ուղղված են շահառուներին: Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	<< կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և << Արարատի մարզպետարանի հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում << կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և << բնապահպանության նախարարությանը

Ա. Զարգարյան

9/5



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
29 հունիսի 2012 թվականի N Մ- 512ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ,
ԿՈՎԿԱՍԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՇԻԿԱՀՈՂ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ»
ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 04.03.2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱ-
ՆԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2012 ԹՎԱԿԱՆԻ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպա-
նության նախարարության 2012 թվականի մայիսի 25-ի N 1/01.3/10808-12 գրությունը և
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի
8-ի N 3/3.8-1/7662-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարու-
թյան 2012 թվականի հունիսի 4-ի N 02/3328-12, Հայաստանի Հանրապետության կառավա-
րությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 31-ի N ԱԱ/3-
4/5379-12, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի հունիսի
4-ի N 01/2779-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նա-
խարարության կողմից իրականացվող՝ 37481400 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի
Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրա-
մի և «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված դրա-
մաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2012 թվականի» ծրագիրը (կց-
վում է):

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մա-
տակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատ-
ճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաս-
տանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ա-
զատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված
ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մա-
տակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավար-
տից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաս-
տանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապե-
տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ու Հայաստանի
Հանրապետության Սյունիքի մարզպետին:



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ս Է

ՀՀ բնապահպանության նախարարության
 արտոնական գների դեկլարարի կողմից
 Է. Փիրումյան
 21 մայիսի 2012թ.

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2012 թվականի

1. Ծրագրի նպատակը	«Շիկահող» պետական արգելոցում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակաուղղված պետական արգելոցի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Կովկասի Բնության Հիմնադրամ, Թուրքմենստանի 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա
4. Ծրագիրը կատարողը	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Սյունիքի մարզ, գ.Շիկահող «Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն»
6. Ծրագրի բյուջեն	Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի համար «Էջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում՝ 37481.4 հազ.դրամ : Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 9-

Handwritten signature

7. Բարեգործություն ստացողը	ի: «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ, Սյունիքի մարզ, գ.Շիկահող																																
8. Ծրագրի իրականացման տևողությունը	01.05.2012թ. - 31.12.2012թ.																																
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2012 թվականի ծրագիր՝ 01.05.2012թ. - 31.12.2012թ. - 37 481.4 հազ.դրամ, այդ թվում՝</p> <ol style="list-style-type: none"> Գրասենյակային նյութերի և հազուստի ձեռքբերում - 2080.0 հազ.դրամ, այդ թվում՝ <table border="1"> <thead> <tr> <th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th> <th>Չափի միավորը</th> <th>Ամբողջ քանակը (ծավալը)</th> <th>Ընդհանուր գումարը (հազար դրամով)</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Գրասենյակային նյութեր և ապրանքներ</td> <td>դրամ</td> <td>1,0</td> <td>232,0</td> </tr> <tr> <td>Արտահագուստ</td> <td>դրամ</td> <td>1,0</td> <td>1848,0</td> </tr> </tbody> </table> Տրանսպորտային նյութերի ձեռքբերում - 4636.0 հազ.դրամ, այդ թվում՝ <table border="1"> <thead> <tr> <th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th> <th>Չափի միավորը</th> <th>Ամբողջ քանակը (ծավալը)</th> <th>Ընդհանուր գումարը (հազար դրամով)</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Բենզին <Ռեզոլյար></td> <td>լիտր</td> <td>4705,0</td> <td>1600,0</td> </tr> <tr> <td>Դիզելային վառելիք</td> <td>լիտր</td> <td>4547,0</td> <td>1546,0</td> </tr> <tr> <td>Ավտոգազ</td> <td>լս/մ</td> <td>4750,0</td> <td>950,0</td> </tr> <tr> <td>Ավտոպահեստամասերի ձեռքբերում</td> <td>դրամ</td> <td>1,0</td> <td>540,0</td> </tr> </tbody> </table> Վարչական սարքավորումներ ձեռքբերում - 4834.0 հազ.դրամ, այդ թվում՝ 	Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)	Գրասենյակային նյութեր և ապրանքներ	դրամ	1,0	232,0	Արտահագուստ	դրամ	1,0	1848,0	Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)	Բենզին <Ռեզոլյար>	լիտր	4705,0	1600,0	Դիզելային վառելիք	լիտր	4547,0	1546,0	Ավտոգազ	լս/մ	4750,0	950,0	Ավտոպահեստամասերի ձեռքբերում	դրամ	1,0	540,0
Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)																														
Գրասենյակային նյութեր և ապրանքներ	դրամ	1,0	232,0																														
Արտահագուստ	դրամ	1,0	1848,0																														
Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)																														
Բենզին <Ռեզոլյար>	լիտր	4705,0	1600,0																														
Դիզելային վառելիք	լիտր	4547,0	1546,0																														
Ավտոգազ	լս/մ	4750,0	950,0																														
Ավտոպահեստամասերի ձեռքբերում	դրամ	1,0	540,0																														

Handwritten signature

9/6

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Համակարգիչ	հատ	2	360,0
Մոնիտոր	հատ	2	140,0
Էլեկտրական սնուցման կարգավորիչ	հատ	2	64,0
Գրասեղան	հատ	6	420,0
Շարժական համակարգիչ	հատ	2	880,0
Աթոռներ	հատ	30	300,0
Համակարգիչ սեղան	հատ	6	240,0
Կոնֆերենս սեղան	հատ	1	220,0
Հեռադիտակ 100 Zoom	հատ	8	800,0
Տեսախցիկ 60 Zoom	հատ	1	450,0
Թվային ֆոտոխցիկ	հատ	3	360,0
Պրոֆեսիոնալ ֆոտոխցիկ	հատ	1	400,0
Տեղորոշիչ սարքեր	հատ	2	200,0

4. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում - **7000.0 հազ.դրամ, այդ թվում՝**

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Ավտոմեքենա ՈՒՍՁ HUNTER	հատ	1	7000,0

5. Աշխատանքների ձեռքբերում - **300.0 հազ.դրամ, այդ թվում՝**

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Էկոգրոսաշրջության ենթակառուցվածքների ստեղծում	դրամ	1,0	300,0

Ա. Զարգարյան

9/6

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Էլեկտրաէներգիա	դրամ	1,0	160,0
Քնական գազի մատակարարման ծառ	դրամ	1,0	200,0
Ջրամատակարարման և ջր. հեռացման	դրամ	1,0	40,0
Միջազգային և միջքաղաքային հեռախոսային	դրամ	1,0	180,0
Քաղաքային հեռախոսային ցանցի	դրամ	1,0	60,0
Բանկային ծառայություններ	դրամ	1,0	291,4
Քնապահպանական այբոմի տպագրություն	դրամ	1,0	400,0

6. Ծառայությունների ձեռքբերում - **1331.4 հազ.դրամ, այդ թվում՝**

7. Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում - **2100.0 հազ.դրամ, այդ թվում՝**

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Մարդատար ավտոմեքենաների նորոգում	դրամ	1,0	1800,0
Սարքավորումների ընթացիկ նորոգում	դրամ	1,0	300,0

8. «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի անձնակազմի լոգոտիչ վարձատրություն (խրախուսում) - **15 200.0 հազ.դրամ:**

Ա. Զարգարյան

9/6

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<p>1. Գրասենյակային նյութերի և հագուստի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 2080.0 հազ.դրամ</p> <p>2. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 4636.0 հազ.դրամ</p> <p>3. Վարչական սարքավորումներ ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 4834.0 հազ.դրամ</p> <p>4. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում ծախսեր (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 7000.0 հազ.դրամ</p> <p>5. Աշխատանքների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 300.0 հազ.դրամ</p> <p>6. Ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 1331.4 հազ.դրամ</p> <p>7. Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 2100.0 հազ.դրամ</p>
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Բոլոր ծախսերն ուղղված են շահառուներին: Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման,	<< կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման

Ա. Բաբայան

9/6

13.	տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	հանձնաժողովի և << Սյունիքի մարզպետարանի հետ <<աշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում << կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և << բնապահպանության նախարարությանը
-----	--	---

Ա. Բաբայան

9/6



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

29 հունիսի 2012 թվականի N Մ-513-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N Մ-454-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱ-
ՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի
դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային
ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն»
պետական ոչ առևտրային կազմակերպության 2012 թվականի հունիսի 18-ի N 235
գրությունը, **ո Ր Ո Շ Մ Ա Ն Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրա-
պետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում
ներմուծվող բեռի մասին (Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքա-
րի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)» N Մ-454-Ա որոշման
1-ին կետում «14607 հնդկական ռուբլի» բառերը փոխարինել «15354 հնդկական ռուբլի»
բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հուլիսի 2012 թվականի N Մ- 514 – Ա
(Որոշումն ընդունվել է 2012 թվականի հունիսի 29-ի նիստին)
քաղ. երևան**

**«ԳՈՐԻՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԳՈՐԻՍ ԲԱՂԱՔԻ «ՀԻՆ ԳՈՐԻՍ» ԲՆԱԿԱՏԵՂԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ
(1771 թ.) ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (2-րդ փուլ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 26-ի N 3/3.8-1/8399-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունիսի 28-ի N 01/3855-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 22-ի N ԱԱ/3-6/6568-12 և ՀՀ Սյունիքի մարզպետարանի 2012 թվականի հունիսի 22-ի N 01/07/2/3081-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է:**

1. Բարեգործական որակել «Գորիս» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 15491817 դրամ արժողությամբ «Գորիս քաղաքի «Հին Գորիս» բնակատեղիի Սուրբ Աստվածածին (1771թ.) եկեղեցու վերականգնման աշխատանքների շարունակություն» (2-րդ փուլ) ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Գորիս» բարեգործական հիմնադրամի (ՀՀ Սյունիքի մարզ, քաղ. Գորիս, Անկախության 3, ՀՎՀՀ՝ 09413971) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հրակարսիմ» ՍՊԸ-ի հետ (ՀՀ Սյունիքի մարզ, քաղ. Կապան, Շինարարների 13/19, ՀՎՀՀ՝ 09420683) 2012 թվականի հունիսի 14-ին կնքված N2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի «Հին Գորիս» թաղամասում 1771 թվականին կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգնման և

վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 15491817 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Գորիս» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան ու Գորիսի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր
Գորիս քաղաքի «Հին Գորիս» բնակատեղիի
Աբ Աստվածածին (1771թ.) եկեղեցու վերակառուցման աշխատանքների
շաբուխակություն




1	Ծրագրի նպատակը	ՀՀ Սյունիքի մարզի, Գորիս քաղաքի «Հին Գորիս» բնակատեղիի 1771թ.-ին Աստվածածին եկեղեցու վերակառուցում:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Անկախվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային ու մաքսային արտոնությունների: Համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի:
3	Բարեգործը	Ֆրանսիայի Վիեննի քաղաքապետարանի՝ «Վիեն-Գորիս» կազմակերպությունը և Ֆրանսիայի «Երկիր և Մշակույթ Կազմակերպությունը» 16, rue Notre-Dame de Lorette, 75009 Paris
4	Ծրագիրը կատարողը	«Գորիս» Բարեգործական Հիմնադրամ ՀՀ Սյունիքի մարզ, հասցեն՝ ք. Գորիս Անկախության 3 (ՀՎՀՀ՝ 09413971)
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Սյունիքի մարզի, Գորիս քաղաքի «Հին Գորիս» բնակատեղիի: Բնագավառը՝ հողեր:
6	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 15.491.817(տասնհինգ միլիոն չորս հարյուր իննսուներեկ հազար ութ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
7	Բարեգործություն ստացողը	Համայնքի հավատացյալ բնակչություն:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ հուլիսի 1-ից մինչև 2012թ սեպտեմբեր 25-ը
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	ՀՀ Սյունիքի մարզի, Գորիս քաղաքի «Հին Գորիս» բնակատեղիի 1771թ.-ին կառուցված Աբ Աստվածածին եկեղեցու վերակառուցման աշխատանքներ: Պատերի մաքրում՝ 624.000 ՀՀ դրամ, հուլիս 2012թ, ներսի և դրսի պատերի կարանալցում՝ 5.880.000 ՀՀ դրամ, հուլիս-օգոստոս 2012թ, Առաստաղի մաքրում՝ 357.600 ՀՀ դրամ, հուլիս-օգոստոս 2012թ, առաստաղի սվաղում՝ 551.300 ՀՀ դրամ, հուլիս-օգոստոս 2012թ, հատակների իրականացում՝ 2.089.000 ՀՀ դրամ, օգոստոս-սեպտեմբեր 2012թ, բեմի վերանորոգում 689.500 ՀՀ դրամ, օգոստոս-սեպտեմբեր 2012թ, Աբ սեղանի պատրաստում՝ 500.000 ՀՀ դրամ, օգոստոս-սեպտեմբեր 2012թ, դռների տեղադրում՝ 1.280.000 ՀՀ դրամ, սեպտեմբեր 2012թ, և այլն՝ 3.520.417 ՀՀ դրամ: Վճարումը կատարվում է «Գորիս» բարեգործական հիմնադրամի կողմից, Ֆրանսիայի Վիեննի քաղաքապետարանի՝ «Վիեն-Գորիս» կազմակերպություն և Ֆրանսիայի «Երկիր և Մշակույթ Կազմակերպություն» բարեգործական կազմակերպությունների ֆինանսավորման հաշվին:
10	Ձեռք բերվող (ներմուծվող)	ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի «Հին Գորիս» Բնակատեղիի 1771թ.-ին կառուցված Աբ


2

	ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Աստվածածին եկեղեցին վերանորոգելու է «Հրակարսիս» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 09420683) որի նախահաշվայի արժեքը կազմում է՝ 15.491.817(տասնհինգ միլիոն չորս հարյուր իննսուներեկ հազար ութ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ (Առանց ԱԱՀ-ի): Նախատեսվում է ձեռք բերել շինանյութ մոտ 8.396.000 (ութ միլիոն երեք հարյուր իննսուներեկ հազար) ՀՀ դրամ՝ տախտակ, կիր, ավազ, բազալտե քարե սալեր, բազալտե աստիճաններ, բազալտե սեղան, փայտյա դռներ, աշխատանք մոտ 3.911.400 (երեք միլիոն ինն հարյուր տասներեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ և այլ ծախսեր՝ 3.184.417 (երեք միլիոն մեկ հարյուր ութսուներեկ հազար չորս հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Մշակույթի նախարարության և ՀՀ Սյունիքի մարզային մշակույթային վարչությունների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու է Ֆրանսիայի Վիեննի քաղաքապետարանի՝ «Վիեն-Գորիս» կազմակերպությունը, Ֆրանսիայի «Երկիր և Մշակույթ Կազմակերպությունը» և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և ամսփոփ հաշվետվություններ):

«Գորիս» բարեգործական հիմնադրամ
Յախազահ Նելսոն Ոսկանյան



«17» հուլիս 2012թ.





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունիսի 2012 թվականի N Մ-515-Ա
քաղ. երևան**

**«ՎՈՐՈՂ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆ-
ՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ
ԾԱՂԿԱԾԵՆ, ՎԱՐՂԵՆՈՒՑ ԵՎ ԵՂԻՊԱՏՐՈՒՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փարածքային կառավարման նախարարության 2012 թվականի հունիսի 27-ի N 07/16/3288-12, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 20-ի N 3/3.8-1/8192-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունիսի 25-ի N 02/3761-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 25-ի N ԱԱ/3-4/6628-12 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2012 թվականի հունիսի 20-ի N 01/14.2/2021-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1173000 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Ծաղկաշեն, Վարդենուտ և Եղիպատրուշ համայնքներին» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմ պլաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02572315) 2012 թվականի հունիսի 5-ին կնքված՝ N WVA/APAR ADP/CM-12/003 LOT2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում

է շինարարական նյութերի մատակարարում՝ 1173000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանի Օղակշեն, Վարդենուտ և Եղիպատրուշ համայնքներին»

ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Բարելավել Ապարանի տարածաշրջանի Օղակշեն, Վարդենուտ և Եղիպատրուշ համայնքների խմելու ջրի ջրագծերի վիճակը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	«Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակ Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.)
4	Ծրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ Հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արագածոտն մարզի Օղակշեն, Վարդենուտ և Եղիպատրուշ համայնքներում: Բնագավառը՝ ջրամատակարարում
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1 173 000 դրամ:
7	Բարեգործությունն ստացողը	Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանի Օղակշեն, Վարդենուտ և Եղիպատրուշ համայնքները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Հունիսի 13 – Օգոստոսի 31, 2012թ.

11.9/2

9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում, սույն թվականի Հունիս-Օգոստոս ամիսներին մատակարարվելու է շինանյութ ստորև ներկայացված աղյուսակին համապատասխան.			
		N	Ծրագրերի անվանումը	Ժամկետները	Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը
		1.	Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանի Օղակշեն, Վարդենուտ և Եղիպատրուշ համայնքներին:	Հունիս – Օգոստոս, 2012թ.	1 173 000
		2.	Ընդամենը:		1 173 000
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շինանյութի մատակարարում, սույն թվականի Հունիս-Օգոստոս ամիսներին մատակարարվելու է շինանյութ ստորև ներկայացված աղյուսակին համապատասխան.			
		N	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը	Նախատեսվող գինը	
		1.	Շինանյութի մատակարարում՝ պոլիէթիլեն PE խողովակներ Ապարանի տարածաշրջանի Օղակշեն համայնքի խմելու ջրագծի վերանորոգման համար:	408 000	
		2.	Շինանյութի մատակարարում՝ պոլիէթիլեն PE խողովակներ Ապարանի տարածաշրջանի Վարդենուտ համայնքի խմելու ջրագծի վերանորոգման համար:	357 000	
		3.	Շինանյութի մատակարարում՝ պոլիէթիլեն PE խողովակներ Ապարանի տարածաշրջանի Եղիպատրուշ համայնքի խմելու ջրագծի վերանորոգման համար:	408 000	
		4.	Ընդամենը:		1 173 000
		Շինանյութի մատակարարումն իրականացնելու նպատակով մրցութային կարգով ընտրվել և պայմանագիր է կնքվել «Արմ Պլաստ» ՓԲԸ-ի հետ՝ 1 173 000 դրամ ընդհանուր արժողությամբ: Մատակարար կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճեն և համապատասխան հավելվածները կցվում են:			
11	Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:			

11.9/2

12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է տեղական իշխանության կառույցների /Օադկաշեն, Վարդենուտ և Եղիպատրուշ համայնքների համայնքապետարանների հետ համատեղ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	<p>Ծրագրի վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Թայվանի կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի Շինարարական Ծրագրերի պատասխանատուի և Տարածքային Ջարգացման Համակարգողների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից:</p> <p>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</p>

Արման Գրիգորյան



«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ապարանի տարածքային զարգացման ծրագրի ղեկավար

2/6-17



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**4 հուլիսի 2012 թվականի N Մ-516-Ա
(Որոշումն ընդունվել է 2012 թվականի հունիսի 29-ին)
քաղ. երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆՅԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԽԱՂԱՍԱՐՔԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆ-
ՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՄԱՇՐՋԱՆԻ
ԱՓՆԱ, ՎԱՐԴԵՆՈՒՏ, ԾԱՂԿԱՇԵՆ, ՆԻԳԱՎԱՆ, ՁՈՐԱԳԼՈՒԽ, ԵՂԻՊԱՏ-
ՐՈՒՇ ԵՎ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փարաձքային կառավարման նախարարության 2012 թվականի հունիսի 27-ի N 07/16/3287-12, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 20-ի N 3/3.8-1/8193-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունիսի 25-ի N 023766/-12, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 25-ի N ԱԱ/3-4/6630-12 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2012 թվականի հունիսի 20-ի N 01/14/2020-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 5999000 դրամ ընդհանուր արժողությամբ «խաղասարքերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Ափնա, Վարդենուտ, Ծաղկաշեն, Նիգավան, Ձորագլուխ, Եղիպատրուշ և Ապարան համայնքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջի սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 90019529) 2012 թվականի հունիսի 5-ին կնքված՝ N WVA/APAR ADP/PG-12/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է

մետաղյա կառուցվածքներով խաղասարքերի մատակարարում՝ 5999000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ Վիժն Ինյերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




«Խաղասարքերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանի Ափնա, Վարդենուտ, Ծաղկաշեն, Նիգավան, Չորագլուխ, Եղիպատրուշ և Ապարան համայնքներ»

ԾՐԱԳԻՐ


1	Ծրագրի նպատակը	Բարելավել Ապարանի տարածաշրջանի Ափնա, Վարդենուտ, Ծաղկաշեն, Նիգավան, Չորագլուխ, Եղիպատրուշ և Ապարան համայնքների երեխաների ժամանցային վայրերի վիճակը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	«Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակ Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.)
4	Ծրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ Հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանի Ափնա, Վարդենուտ, Ծաղկաշեն, Նիգավան, Չորագլուխ, Եղիպատրուշ և Ապարան համայնքներում: Բնագավառը՝ սոցիալական
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 5 999 000 դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանի Ափնա, Վարդենուտ, Ծաղկաշեն, Նիգավան, Չորագլուխ, Եղիպատրուշ և Ապարան համայնքները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Հունիսի 18 – Օգոստոսի 31, 2012թ.

9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում, սույն թվականի Հունիս-Օգոստոս ամիսներին մատակարարվելու է շինանյութ ստորև ներկայացված աղյուսակին համապատասխան.			
		N	Ծրագրերի անվանումը	Ժամկետները	Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը
		1.	Խաղասարքերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանի Ափնա, Վարդենուտ, Ծաղկաշեն, Նիգավան, Չորագլուխ, Եղիպատրուշ և Ապարան համայնքներ:	Հունիս – Օգոստոս, 2012թ.	5 999 000
		2.	Ընդամենը:		5 999 000
10	Չեղք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	N	Չեղք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը	Նախատեսվող գինը	
		1.	Խաղասարքերի մատակարարում՝ ճոճանակներ, կարուսել և սահարան, Ափնա համայնքի համար	851 125	
		2.	Խաղասարքերի մատակարարում՝ ճոճանակներ, կարուսել և սահարան Վարդենուտ համայնքի համար	821 125	
		3.	Խաղասարքերի մատակարարում՝ ճոճանակներ, կարուսել և սահարան Ծաղկաշեն համայնքի համար	621 125	
		4.	Խաղասարքերի մատակարարում՝ ճոճանակներ, կարուսել և սահարան Նիգավան համայնքի համար	621 125	
		5.	Խաղասարքերի մատակարարում՝ ճոճանակներ, կարուսել և սահարան Չորագլուխ համայնքի համար	621 125	
		6.	Խաղասարքերի մատակարարում՝ ճոճանակներ, կարուսել և սահարան Եղիպատրուշ համայնքի համար	821 125	
		7.	Խաղասարքերի մատակարարում՝ ճոճանակներ, կարուսել և սահարան Ապարան համայնքի համար	1 642 250	
		8.	Ընդամենը:	5 999 000	
Շինանյութի մատակարարումն իրականացնելու նպատակով մրցութային կարգով ընտրվել և պայմանագիր է կնքվել «Ջի Սթայ» ՓԲԸ -ի հետ՝ 5 999 000 դրամ ընդհանուր արժողությամբ: Մատակարար կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճեն և համապատասխան հավելվածները կցվում են:					



11	Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է տեղական իշխանության կառույցների / Ափնա, Վարդենուտ, Ծաղկաշեն, Նիգավան, Չորագլուխ, Եղիպատրուշ և Ապարան համայնքների համայնքապետարանների հետ համատեղ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	<p>Ծրագրի վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Թայվանի կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի Շինարարական Ծրագրերի պատասխանատուի և Տարածքային Զարգացման Համակարգողների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից:</p> <p>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</p>

Արման Գրիգորյան



«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ապարանի տարածքային զարգացման ծրագրի ղեկավար



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունիսի 2012 թվականի N Մ-517-Ա
քաղ. երևան**

**«ՎՈՐՈՂ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ՎԱՐՂԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ՄԱՆԿԱՊԱՐ-
ՏԵԶԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒ
ԼՈՒՍԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱ-
ԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փարաձքային կառավարման նախարարության 2012 թվականի հունիսի 27-ի N 07/16/3289-12, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի 20-ի N 3/3.8-1/8194-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունիսի 25-ի N 02/3764-12, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 25-ի N ԱԱ/3-4/6629-12 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հունիսի 25-ի N 01.1/15/2536-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3577095 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Բանավան թաղամասի մանկապարտեզի, համայնքային կենտրոնի և երաժշտական դպրոցի ու Լուսակունք համայնքի մանկապարտեզի ջեռուցման համակարգերի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Իմէքս գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00847479) 2012 թվականի մայիսի 30-ին կնքված՝ N WVA/VAR ADP/HT-12/001 (RB) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգերի մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 3577095 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Բանավան թաղամասի մանկապարտեզի, համայնքային կենտրոնի և երաժշտական դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում» ծրագրի մասին» N Մ-569-Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱԿ


Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

20 9/4

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
 հայաստանյան մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար

Լրանա Պողոսյանի կողմից

«29» 06, 2012թ.



«Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Բանական քաղամասի մանկապարտեզի, համայնքային կենտրոնի և երաժշտական դպրոցի և Լուսակունք համայնքի մանկապարտեզի ջեռուցման համակարգերի կառուցում»

Ծ Ր Ա Գ Ի Բ

1.	Ծրագրի նպատակը	Բարելավել երեխաների կրթության պայմանները Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Բանական քաղամասի մանկապարտեզում, համայնքային կենտրոնում և երաժշտական դպրոցում, ինչպես նաև Լուսակունք համայնքի մանկապարտեզում			
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:			
3.	Բարեգործը	Վորլդ Վիժն Ֆրանսիայի աջակցող գրասենյակ, հասցե՝ Վիժն Դու Մոնո, 7 ուն Փասքուիր, 75008, Փարիզ, Ֆրանսիա, հեռախոս՝ +01 49 49 11 12			
4.	Ծրագիրը կատարողը	«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ հասցե՝ ք. Երևան, Գ. Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755			
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք և Լուսակունք համայնք: Բնագավառը՝ կրթություն:			
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3.577.095 դրամ:			
7.	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող է հանդիսանում Վարդենիսի քաղաքապետարանի Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Բանական քաղամասի մանկապարտեզի, համայնքային կենտրոնի և երաժշտական դպրոցի մասով, և Լուսակունքի գյուղապետարանի Լուսակունքի մանկապարտեզի մասով:			
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	04 հունիսի 2012թ. – 20 հուլիսի 2012թ.			
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական	<table border="1"> <tr> <td>Միջոցառումների նկարագրությունը</td> <td>Ժամկետները</td> <td>անհրաժեշտ ֆինանս. միջոցներ</td> </tr> </table>	Միջոցառումների նկարագրությունը	Ժամկետները	անհրաժեշտ ֆինանս. միջոցներ
Միջոցառումների նկարագրությունը	Ժամկետները	անհրաժեշտ ֆինանս. միջոցներ			

	միջոցների ծավալը	Վարդենիս համայնքի Բանական քաղամասի մեկ շենքում տեղակայված մանկապարտեզի, համայնքային կենտրոնի, երաժշտական դպրոցի և Լուսակունք համայնքի մանկապարտեզի ջեռուցման համակարգերի կառուցում	հունիս-հուլիս, 2012թ.	3.577.095 դրամ
10.	Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող զինը	Վարդենիս համայնքի Բանական քաղամասի մանկապարտեզի, համայնքային կենտրոնի և երաժշտական դպրոցի և Լուսակունք համայնքի մանկապարտեզի ջեռուցման համակարգերի կառուցման աշխատանքներն իրականացվելու է Իմեքս Գրուպ ՍՊԸ կողմից, որը ընտրվել է բաց մրցույթի արդյունքում: Վարդենիս համայնքի Բանական քաղամասի մանկապարտեզի, համայնքային կենտրոնի և երաժշտական դպրոցի, ինչպես նաև Լուսակունք համայնքի մանկապարտեզի ջեռուցման համակարգերի կառուցման համար նախատեսված է 3.577.095 դրամ/ԻՄեքս Գրուպ ՍՊԸ կողմից մատակարարվող և ջեռուցման համակարգի կառուցման համար անհրաժեշտ ապրանքների նկարագիրը ներկայացված է սույն ծրագրին կցված հավելվածում/:		
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:		
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Վարդենիսի քաղաքապետարանի և Լուսակունքի գյուղապետարանի հետ համագործակցելով:		
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային առույտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին տարեկան հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համաձայնագրով:		

Հուսիկ Սարգսյան

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ»
 միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
 Գեղարքունիքի զարգացման ծրագրի ղեկավար


20 9/4

20 9/4

Հավելված

«Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Բանավան քաղաքում
մանկապարտեզի, համայնքային կենտրոնի և երաժշտական դպրոցի և Լուսակունք
համայնքի մանկապարտեզի ջեռուցման համակարգերի կառուցում» ծրագրի

N	Անվանումը	Չ/մ	Քանակ
1	2	3	4
1. Վարդենիս քաղաքի Բանավան համայնքի մանկապարտեզի ջեռուցում			
1	Երկկոնտուրանի տուրքը կաթսա 24կՎտ	հատ	1
2	Ծխատար F100	հատ	1
3	Ալյումինե մարտկոց P=500	հատ	115
4	Փական 2025x3/4" F	հատ	2
5	Փական 1620x1/2" F	հատ	2
6	Ֆիլտր 1/2"	հատ	1
7	Փական 1/2" M շտուգեռով	հատ	1
8	Անցում 3/4" ամերիկանկա	հատ	2
9	Անցում 1/2" ամերիկանկա	հատ	2
10	Անցում 1620x1/2" M	հատ	2
11	Եռակողմ 25x1/2" Fx25	հատ	1
12	Եռակողմ 1/2" Fx Fx F	հատ	2
13	Նիպել 1/2" MxM	հատ	4
14	Գազի խողովակ L=90սմ	հատ	1
15	Մարտկոցի մոնտաժման կոմպլեկտ	հատ	11
16	Միջադիր	հատ	33
17	Մարտկոցի կախիչ	հատ	11
18	Ղետադարձ գծի արբերիչ	հատ	11
19	Չեռքի կարգ.արբերիչ	հատ	11
20	Անցում 1216x1/2" M	հատ	22
21	Եռակողմ 25x25x25 F9 պրես	հատ	2
22	Եռակողմ 25x16x25 F9 պրես	հատ	2
23	Եռակողմ 25x16x20 F9 պրես	հատ	4
24	Եռակողմ 20x16x20 F9 պրես	հատ	8
25	Եռակողմ 20x16x16 F9 պրես	հատ	4
26	Անկյուն 20x20 F9պրես	հատ	26
27	Անկյուն 16x16 F9պրես	հատ	4
28	Խողովակ 25	զ/մ	24
29	Խողովակ 20	զ/մ	95
30	Խողովակ 16	զ/մ	28
31	Խողովակի ամրացում 25	հատ	34
32	Խողովակի ամրացում 20	հատ	133
33	Խողովակի ամրացում 16	հատ	56
34	Խողովակի մեկուսիչ 20	զ/մ	2
35	Պտուտակ դյուպել N5	հատ	226
36	Մարտկոցների և կաթսայի մոնտաժային աշխատանքներ	Միավոր	1



20 9/4

2. Վարդենիս քաղաքի Բանավան համայնքի համայնքի կենտրոնի ջեռուցում			
1	Երկկոնտուրանի տուրքը կաթսա 18կՎտ	հատ	1
2	Ծխատար F100	հատ	1
3	Ալյումինե մարտկոց P=500	հատ	73
4	Փական 2025x3/4" F	հատ	2
5	Փական 1620x1/2" F	հատ	2
6	Ֆիլտր 1/2"	հատ	1
7	Փական 1/2" M շտուգեռով	հատ	1
8	Անցում 3/4" ամերիկանկա	հատ	2
9	Անցում 1/2" ամերիկանկա	հատ	2
10	Անցում 1620x1/2" M	հատ	2
11	Եռակողմ 20x1/2" Fx20 F9	հատ	1
12	Եռակողմ 1/2" Fx Fx F	հատ	2
13	Նիպել 1/2" MxM	հատ	4
14	Գազի խողովակ L=90սմ	հատ	1
15	Մարտկոցի մոնտաժման կոմպլեկտ	հատ	4
16	Միջադիր	հատ	12
17	Մարտկոցի կախիչ	հատ	4
18	Ղետադարձ գծի արբերիչ	հատ	4
19	Չեռքի կարգ.արբերիչ	հատ	4
20	Անցում 1216x1/2" M	հատ	8
21	Եռակողմ 20x25x20 F9 պրես	հատ	2
22	Եռակողմ 20x16x20 F9 պրես	հատ	2
23	Եռակողմ 20x16x16 F9 պրես	հատ	2
24	Անկյուն 20x20 F9պրես	հատ	16
25	Անկյուն 16x16 F9պրես	հատ	8
26	Անկյուն 20x16 F9պրես	հատ	2
27	Խողովակ 25	զ/մ	4
28	Խողովակ 20	զ/մ	56
29	Խողովակ 16	զ/մ	28
30	Խողովակի ամրացում 25	հատ	6
31	Խողովակի ամրացում 20	հատ	80
32	Խողովակի ամրացում 16	հատ	56
33	Խողովակի մեկուսիչ 20	զ/մ	2
34	Խողովակի մեկուսիչ 16	զ/մ	2
35	Պտուտակ դյուպել N5	հատ	142
36	Մարտկոցների և կաթսայի մոնտաժային աշխատանքներ	Միավոր	1
3. Վարդենիս քաղաքի Բանավան համայնքի երաժշտական դպրոցի ջեռուցում			
1	Երկկոնտուրանի տուրքը կաթսա 32կՎտ	հատ	1
2	Ծխատար F100	հատ	1
3	Ալյումինե մարտկոց P=500	հատ	216
4	Փական 1"	հատ	2
5	Անցում 1M"x3/4" F	հատ	2
6	Անցում 2632x1" M	հատ	2
7	Փական 1620x1/2" F	հատ	2
8	Փական 1/2" շտուգեռով	հատ	1
9	Անցում 3/4" ամերիկանկա	հատ	2
10	Անցում 1/2" ամերիկանկա	հատ	2



11	Անցում 1620x1/2" M	հատ	2
12	Եռակողմ 25x1/2" Fx25	հատ	1
13	Եռակողմ 1/2" Fx Fx F	հատ	2
14	Նիպել 1/2" MxM	հատ	4
15	Անցում 3/4" Fx1/2" M	հատ	1
16	Գազի խողովակ L=90սմ	հատ	1
17	Մարտկոցի մոնտաժման կոմպլեկտ	հատ	19
18	Միջադիր	հատ	57
19	Մարտկոցի կախիչ	հատ	19
20	Չեռադարձ գծի արբերիչ	հատ	19
21	Չեռադարձ արբերիչ	հատ	19
22	Անցում 1216x1/2" M	հատ	38
23	Եռակողմ 2025x2632x2025 պոետ	հատ	2
24	Եռակողմ 25x16x25 պոետ	հատ	18
25	Եռակողմ 25x16x20 պոետ	հատ	4
26	Եռակողմ 20x16x20 պոետ	հատ	8
27	Եռակողմ 20x16x16 պոետ	հատ	4
28	Անկյուն 25x25 պոետ	հատ	26
29	Անկյուն 20x20 պոետ	հատ	26
30	Անկյուն 16x16 պոետ	հատ	4
31	Խողովակ 32	զ/մ	4
32	Խողովակ 25	զ/մ	104
33	Խողովակ 20	զ/մ	58
34	Խողովակ 16	զ/մ	41
35	Խողովակի ամրացում 32	հատ	6
36	Խողովակի ամրացում 25	հատ	149
37	Խողովակի ամրացում 20	հատ	83
38	Խողովակի ամրացում 16	հատ	82
39	Խողովակի մեկուսիչ 25	զ/մ	2
40	Պտուտակ դյուպել N5	հատ	319
41	Մարտկոցների և կաթսայի մոնտաժային աշխատանքներ	Միավոր	1

21.9/4

4. Վարդենիս քաղաքի Լուսակունք համայնքի մանկապարտեզի ջեռուցում

1	Անկյուն 32x32 90 PPR	հատ	4
2	Եռաբաշխիչ 32x32x32 PPR	հատ	2
3	Խողովակի ամրակ 1"	հատ	4
4	Անկյուն 32x1" M	հատ	2
5	Կցամաս 32x25 PPR	հատ	4
6	Կցամաս 32x32 PPR	հատ	1
7	Գազի տուրբո կաթսա երկկոմստոր 26kW	հատ	1
8	Ալյումինի մարտկոց H=500մմ	հատ	104
9	Կցամաս 3/4" Fx1/2" M	հատ	1
10	Խողովակ 25PPR	զ/մ	60
11	Խողովակ 20PPR	զ/մ	84
12	Ամերիկանկա 3/4"	հատ	2
13	Ամերիկանկա 1/2"	հատ	2
14	Ֆիլտր 3/4"	հատ	1
15	Ֆիլտր 1/2"	հատ	1

16	Փական 3/4" FF	հատ	1
17	Փական 3/4" MF	հատ	1
18	Փական 1/2" FF	հատ	1
19	Փական 1/2" MF	հատ	2
20	Չեռադարձ կարգարբերիչ	հատ	12
21	Չեռադարձ գծի արբերիչ	հատ	12
22	Անկյուն 20x1/2" M	հատ	2
23	Անկյուն 25x25 90PPR	հատ	66
24	Անկյուն 20x20 90PPR	հատ	90
25	Անկյուն 25x25 45PPR	հատ	6
26	Անկյուն 20x20 45PPR	հատ	30
27	Եռաբաշխիչ 25x20x25 PPR	հատ	18
28	Եռաբաշխիչ 20x20x20 PPR	հատ	5
29	Անցում 25x20 PPR	հատ	4
30	Կցամաս 25x25 PPR	հատ	10
31	Կցամաս 20x20 PPR	հատ	12
32	Միջադիր 1"	հատ	24
33	Նիպել 1"	հատ	4
34	Կաթսայի ծխատար	հատ	1
35	Խողովակի ամրակ 3/4"	հատ	90
36	Խողովակի ամրակ 1/2"	հատ	120
37	Դյուպել ճմմ	հատ	210
38	Պտուտակ 4x35	հատ	210
39	Անցում ամերիկանկայով 20x1/2" M	հատ	1
40	Եռաբաշխիչ 1/2"x1/2"x1/2"	հատ	1
41	Կցամաս 1/2"x1/2" M	հատ	3
42	Պատի անկյուն 20x1/2" F	հատ	2
43	Պակլի	հատ	0
44	Մարտկոցի կոմպլեկտ	հատ	12
45	Կաթսայի կախիչ	հատ	1
46	Խողովակի բացալս 20PPR	հատ	2
47	Խողովակ 32PPR	զ/մ	4
48	Անցում 20x1/2" M	հատ	24
49	Մարտկոցների և կաթսայի մոնտաժային աշխատանքներ	Միավոր	1

21.9/4



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունիսի 2012 թվականի N Մ-518-Ա
քաղ. երևան**

**«ՎՈՐԼԳ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԱՆԳԵՂԱԿՈԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԱՎԱԶԱՆԻ ԵՎ ՇԱՔԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ՎԵՐԱՆՈՐԴՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փարածքային կառավարման նախարարության 2012 թվականի հունիսի 27-ի N 07/16/3290-12, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 22-ի N 3/3.8-1/8316-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունիսի 27-ի N 01/3826-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 21-ի N ԱԱ/3-6/6534-12 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի հունիսի 25-ի N 01/3095-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3584448 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Անգեղակոթ համայնքի խմելու ջրի ավազանի և Շաքի համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝


1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



08 հունիսի 2012թ.

«ՀՀ Սյունիքի մարզի Անգեղակոթ համայնքի խմելու ջրի ավազանի և Շաքի համայնքի խմելու ջրագծի վերանորոգում» ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Անգեղակոթ և Շաքի համայնքներին՝ ապահովելով ազգաբնակչությանը մաքուր խմելու ջրով:						
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:						
3	Բարեգործը	Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա, հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR United Kingdom, tel. +44 1908 841000						
4	Ծրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755):						
5	Ծրագրի իրականացման վայրը - քննազավառը	Իրականացման վայրն է ՀՀ Սյունիքի մարզի Անգեղակոթ և Շաքի համայնքները:						
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է՝ 3584448 դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա: <table border="1"> <tr> <td><u>Ծախսի ուղղությունը</u></td> <td><u>չափը</u></td> <td><u>ժամկետը</u></td> </tr> <tr> <td>Շինանյութերի ձեռքբերում</td> <td>3584448 դրամ</td> <td>3-րդ եռամսյակ 2012թ.</td> </tr> </table>	<u>Ծախսի ուղղությունը</u>	<u>չափը</u>	<u>ժամկետը</u>	Շինանյութերի ձեռքբերում	3584448 դրամ	3-րդ եռամսյակ 2012թ.
<u>Ծախսի ուղղությունը</u>	<u>չափը</u>	<u>ժամկետը</u>						
Շինանյութերի ձեռքբերում	3584448 դրամ	3-րդ եռամսյակ 2012թ.						
7	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող է հանդիսանում Սյունիքի մարզի Անգեղակոթ և Շաքի համայնքները, ի մասնավորի՝ նշեցք, որ ծրագրից օգտվելու են Անգեղակոթ և Շաքի համայնքների բոլոր բնակիչները, համաձայն համայնքների կողմից ներկայացված ծրագիր-առաջարկի:						
8	Ծրագրի իրականացման տ-ողությունը	2012թ. հուլիսի 1-ից 2012թ. սեպտեմբերի 30-ը						
9	Միջոցառումների նկարագրությունը - ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Անգեղակոթ համայնքի խմելու ջրի ավազանը վերանորոգելու նպատակով կզնվի շինանյութ 1316448 դրամ արժողությամբ (ջրավազանի ծածկի ցեմենտ-ավազով սվաղ ջրամեկուսացումով, պատերի ցեմենտ-ավազով սվաղ ներսից և ցանկապատի կառուցում): Շաքի համայնքի խմելու ջրի ծրագիրը վերանորոգելու նպատակով կզնվի շինանյութ 2268000 դրամ արժողությամբ (ծրագծի խողովակների փոխում): Շինանյութը կտրամադրվի Անգեղակոթ և Շաքի համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար: Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2012թ. սեպտեմբերի 30-ը:						

20.9/5

10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները - նախատեսվող գինը	ծրագրով նախատեսված է՝ - Անգեղակոթ համայնքի խմելու ջրի ավազանի վերանորոգման նպատակով նախատեսվում է ձեռք բերել հետևյալ շինարարական նյութերը: պոլիէթիլենային և պողպատյա խողովակներ, էլեկտրոդ, ցանկապատի ցանց, ամրան, ցեմենտ, ավազ 1316448 դրամ արժողությամբ: - Շաքի համայնքի խմելու ջրի ծրագծի վերանորոգման նպատակով նախատեսվում է ձեռք բերել պոլիէթիլենային խողովակներ 2268000 դրամ արժողությամբ: Վերոնշյալ երկու համայնքներում վերանորոգման աշխատանքները կիրականացվեն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Նշված ապրանքների - ծառայությունների ձեռքբերման նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ընտրելու է կազմակերպություն՝ որպես մատակարար - կնքելու է պայմանագիր նրա հետ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման - այլ մարմինների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Սյունիքի մարզի Անգեղակոթ և Շաքի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Ծրագրով նախատեսված է Անգեղակոթ համայնքի վերանորոգված ավազանն ու Շաքի համայնքի խմելու ջրի ծրագծերը հանձնել նշված համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ 15 տարի այն չօտարելու պայմանով:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերահսկողությունը իրականացվում է Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի գրասենյակի, Անգեղակոթ և Շաքի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համապատասխան բաժինների կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի կողմից և ՀՀ հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Սիսիանի Տարածքային Ջարգացման Ծրագրի թմի ղեկավար

Աշոտ Բաբայան

20.9/5



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունիսի 2012 թվականի N Մ-519-Ա
քաղ. երևան**

**«ՎՈՐԼԳ ՎԻԺՆ ԻՆՅԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ՉՈՐՍ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փարաօրային կառավարման նախարարության 2012 թվականի հունիսի 27-ի N 07/16/3291-12, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 22-ի N 3/3.8-1/8315-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունիսի 27-ի N 01/3828-12, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 21-ի N ԱԱ/3-6/6535-12 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի հունիսի 27-ի N 01/3119-12 եզրակացությունները, որոշում է.


1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 7025737 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի չորս համայնքների մշակույթի տան վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:



ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


«Սյունիքի մարզի չորս համայնքների մշակույթի տան վերանորոգում»
Ծրագիր

1	Ծրագրի նպատակը	Աջակցել Տոլորս, Խոտ, Շաղատ և Հարժիս համայնքներին, համայնքներում մշակութային կյանքը զարգացնելու նպատակով:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա, հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR United Kingdom, tel. +44 1908 841000
4	Ծրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755):
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրն է ՀՀ Սյունիքի մարզի Տոլորս, Խոտ, Շաղատ և Հարժիս համայնքները: Բնագավառը՝ սոցիալական
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 7025737 դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա: Ծախսի ուղղությունը Շինանյութերի ձեռքբերում չափը 7025737 դրամ ժամկետը երրորդ եռամսյակ 2012թ.
7	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող է հանդիսանում Տոլորս, Խոտ, Շաղատ և Հարժիս համայնքները, առավելագույնը՝ համայնքի պատանիները և երիտասարդները, համաձայն համայնքների կողմից ներկայացված ծրագիր առաջարկի:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	01 Հուլիս, 2012թ. - 30 սեպտեմբեր, 2012թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Տոլորս, Խոտ, Շաղատ և Հարժիս համայնքներում մշակութային կյանքը զարգացնելու նպատակով պետք է վերանորոգվի մշակույթի տների սենյակները (պատերի և առաստաղի հարդարում-ներկում, դռների և պատուհանների փոխում, հատակների հղկում, ներկում): Դրա համար պետք է ձեռք բերվեն վերոնշյալ չորս համայնքների համար շինարարական նյութեր 7025737 դրամ արժեքով: Շինարարական աշխատանքները կիրականացվեն համայնքի կողմից և կավարտվեն մինչև 2012թ. սեպտեմբերի վերջը:

ԿՊ-9/6

10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Սյունիքի մարզի Տոլորս, Խոտ, Շաղատ և Հարժիս համայնքներում մշակույթի տների սենյակները վերանորոգելու համար նախատեսված է ձեռք բերել շինարարական նյութեր՝ ցեմենտ, գաջ, ներկեր, դռներ և պատուհաններ: 7025737 դրամ արժողությամբ: շինանյութերի ձեռքբերման ծախսերը կբաշխվեն հետևյալ կերպ. Տոլորս համայնք 1456192 դրամ Խոտ համայնք 1720291 դրամ Շաղատ համայնք 1728342 դրամ Հարժիս համայնք 2120912 դրամ Նշված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ընտրելու է կազմակերպություն՝ որպես մատակարար և կնքելու է պայմանագիր նրա հետ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Սյունիքի մարզի Տոլորս, Խոտ, Շաղատ և Հարժիս համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Ծրագրով նախատեսված է մշակույթի տները վերանորոգումից հետո հանձնել վերոհիշյալ չորս համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ 15 տարի այն չօտարելու պայմանով:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերահսկողությունը իրականացվում է Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի գրասենյակի, Տոլորս, Խոտ, Շաղատ և Հարժիս համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համապատասխան բաժինների կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային ատղիտի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
Սիսիանի Տարածքային Ջարգացման Ծրագրի թիմի ղեկավար

Աշոտ Բաբայան 

ԿՊ-9/6



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունիսի 2012 թվականի N Մ-520-Ա
քաղ. երևան**

**«ՎՈՐՈՎ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԴԱՐՔԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փարածքային կառավարման նախարարության 2012 թվականի հունիսի 27-ի N 07/16/3292-12, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 22-ի N 3/3.8-1/8314-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունիսի 27-ի N 01/3827-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 21-ի N ԱԱ/3-6/6536-12 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի հունիսի 25-ի N 01/3094-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 983955 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնքի աղբավայրերի ցանկապատում» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



Հունիսի 2012թ.

«ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս համայնքի աղբավայրերի ցանկապատում»
 ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Աջակցել Դարբաս համայնքին՝ ապահովելով ազգաբնակչությանը մաքուր և հիգիենիկ միջավայրում ապրելու						
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:						
3	Բարեգործը	Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա, հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR United Kingdom, tel. +44 1908 841000						
4	Ծրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (հասցե՝ Երևան, Ռ.Սելիջյան 1; ՀՎՀՀ 02528755):						
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրն է ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս համայնքը, բնագավառը՝ սոցիալական						
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 983,955 դրամ, ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա: <table border="1"> <tr> <td><u>Ծախսի ուղղություն</u></td> <td><u>չափը</u></td> <td><u>ժամկետը</u></td> </tr> <tr> <td>Շինանյութերի ձեռքբերում</td> <td>983,955 դրամ</td> <td>երրորդ եռամսյակ 2012թ.</td> </tr> </table>	<u>Ծախսի ուղղություն</u>	<u>չափը</u>	<u>ժամկետը</u>	Շինանյութերի ձեռքբերում	983,955 դրամ	երրորդ եռամսյակ 2012թ.
<u>Ծախսի ուղղություն</u>	<u>չափը</u>	<u>ժամկետը</u>						
Շինանյութերի ձեռքբերում	983,955 դրամ	երրորդ եռամսյակ 2012թ.						
7	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող է հանդիսանում Դարբաս համայնքը: Ի մասնավորի նշենք, որ ծրագրից օգտվելու են Դարբաս համայնքի Դարբաս և Շամբ բնակավայրերի բոլոր բնակիչները, համաձայն համայնքի կողմից ներկայացված ծրագիր-առաջարկի:						
8	Ծրագրի իրականացման տևողությունը	01 Հուլիս, 2012 թ. – 30 Մեպտեմբեր, 2012թ.						
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Դարբաս համայնքի Դարբաս և Շամբ բնակավայրերի աղբավայրերը ցանկապատելու նպատակով կզնվի շինանյութեր 983,955 դրամ արժողությամբ և կտրամադրվի Դարբաս համայնքի տեղական ինքնակառավարման մարմնին՝ աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար: Նախատեսվում է ծրագիրն ավարտել 2012թ-ի Մեպտեմբերին:						

2/6.12

10	Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս համայնքի աղբավայրերի ցանկապատում» ծրագրով նախատեսված է ձեռք բերել շինարարական նյութեր / պողպատյա խողովակներ, էլեկտրոդ, ցանկապատի ցանց, ամրան, ցեմենտ, անկյունակ/ 983,955 դրամ արժողությամբ: Նշված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ընտրելու է կազմակերպություն՝ որպես մատակարար և կնքելու է պայմանագիր նրա հետ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Սյունիքի մարզի Դարբաս համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի հետ: Ծրագրով նախատեսված է իրականացված ցանկապատը հանձնել Դարբաս համայնքի տեղական ինքնակառավարման մարմնին, 15 տարի այն չօտարելու պայմանով:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերահսկողությունը իրականացվում է Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի գրասենյակի, Դարբաս համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համապատասխան բաժինների կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
 Միսիանի Տարածքային Զարգացման Ծրագրի թիմի ղեկավար



Handwritten signature

2/6.12



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունիսի 2012 թվականի N Մ-521-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 26-ի N 3/3.8-2/8452-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունիսի 26-ի N ՀԴ/22/6290-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 27-ի N ԱԱ/3-6/6711-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների (20 տեղ, 5337 կգ ընդհանուր քաշով, 186738.20 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7600 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունիսի 2012 թվականի N Մ-522-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 27-ի N 3/3.8-2/8524-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունիսի 26-ի N ՀԴ/22/6289-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 27-ի N ԱԱ/3-6/6710-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների (35 տեղ, 11118 կգ ընդհանուր քաշով, 878902.32 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6950 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունիսի 2012 թվականի N Մ-523-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 26-ի N 3/3.8-2/8443-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունիսի 26-ի N ՀԴ/22/6295-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 25-ի N ԱԱ/3-6/6639-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականիսարգելման ծրագրի շրջանակներում ստացված ներարկիչների և դրանց այրման տուփերի (19 տեղ, 3662 կգ ընդհանուր քաշով, 14391.61 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 4282.81 ԱՄՆ-ի դոլար, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունիսի 2012 թվականի N Մ-524-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
